ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

0010, ք.Երևան-10, Մ.Մկրտչյան 5.
Հեռ. 011-59-72-07. Ֆաքս 52-65-77
Էլ. փոստ: secretariat@mineconomy.am
Վեբ կայք: www.mineconomy.am

№ 09/4016-2024
«28» 02 2024թ

«Ալեքսիմ» ՍՊԸ-ին
(հասցե՝ ՀՀ, ք. Վանաձոր, Աղայան 72/37)
էլ. փոստ՝ alexim.spy@bk.ru

Ծ Ա Ն Ու Ց Ում

(ՀՀԷՆ-ՀՄԱԾՁԲ-24/28 ծածկագրով պայմանագիրը միակողմանի լուծելու մասին)

ՀՀ էկոնոմիկայի նախարարության և «Ալեքսիմ» ՍՊ ընկերության միջև 24.01.2024 թվականին կնքվել է շենքերի մաքրման ծառայությունների թիվ ՀՀԷՆ-ՀՄԱԾՁԲ-24/28 ծածկագրով պետական գնման պայմանագիրը (այսուհետ նաև՝ Պայմանագիր):

ՀՀ էկոնոմիկայի նախարարության գործերի կառավարման վարչության 20.02.2024թ. թիվ Ն/929-2024 զեկուցագրի համաձայն՝ շենքերի մաքրման ծառայություններ մատուցող «Ալեքսիմ» ՍՊԸ-ի տնօրեն Լուսինե Մարկոսյանը, փոխկապակցված անձ է հանդիսանում «Մաքսալեքս» ՍՊԸ-ի տնօրեն Նարեկ Մուրադյանի հետ /վերջիններս հանդիսանում են ամուսիններ/, ինչպես նաև «Մաքսալեքս» ՍՊԸ-ն 01.07.2023թ-ից մինչև 01.07.2025թ. ընդգրկված է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Վերը նշված փոխկապակցվածությունը հիմնավորվում է ՀՀ արդարադատության նախարարության 27.02.2024թ. թիվ /26.2/7860-2024 գրությամբ:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 121-րդ կետի համաձայն՝ մասնակցի «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառվելը, դրանում գտնվելու ժամանակահատվածում, ինքնաբերաբար

հանգեցնում է վերջինիս հետ փոխկապակցված անձանց գնումների գործընթացին մասնակցության իրավունքի սահմանափակման:

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետի 8-րդ ենթակետի և Պայմանագրի 7.3 կետի համաձայն՝ այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, պայմանագրի կողմը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով պայմանագրի կողմի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

Վերոգրյալով պայմանավորված հայտնում ենք, որ ՀՀ Էկոնոմիկայի նախարարությունը միակողմանի լուծում է 24.01.2024 թվականին կնքված շենքերի մաքրման ծառայությունների թիվ ՀՀԷՆ-ՀՄԱԾՁԲ-24/28 ծածկագրով պետական գնման պայմանագիրը, իսկ պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով՝ կիրառում է ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով և Պայմանագրի 7.9-րդ կետով սահմանված դրույթները:

«Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ Ընկերությունը կներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը:

Հաշվի առնելով վերոգրյալը տեղեկացնում ենք՝ Պայմանագրի միակողմանի լուծման արդյունքում պայմանագրի կատարման ապահովման գումարը կազմում է 283 500 ՀՀ դրամ, որն անհրաժեշտ է վճարել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900008000664 հաշվեհամարին և որակավորման ապահովման գումարը կազմում է 425 250 ՀՀ դրամ, որն անհրաժեշտ է վճարել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900008000698 հաշվեհամարին:

Հարգանքով՝

ԼԻԱՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԿԱՏԱՐՈՂ

Recoverable Signature

X

ԼԻԱՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Signed by: GRIGORYAN LIANA 5901780302

Կատարող՝
Խորհրդական, Դավիթ Մհերյան
011597223